Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

քաղաքացիների ընդունելության և դիմումների, բողոքների ու առաջարկությունների վերաբերյալ

07.07.2015թ. դրությամբ

1. Ստացվել են դիմումներ ընդամենը՝ **6.949**

որից՝

	ԹՎԱՔԱՆԿԸ	% ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ
առաջարկություն	24	0.3
դիմում	5472	78.7
բողոք	1453	21.1
կրկնակի	363	5.2
կոլեկտիվ	12	0.1

2. Վերցված է վերահսկողության ընդամենը՝ **1366**

	ԹՎԱՔԱՆԿԸ	% ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ
դիմում	601	43.5
բողոք	765	56.1

3. Ըստ հարցերի բնույթի

	ԹՎԱՔԱՆԿԸ	% ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ
բնակարանային	40	0.5
կոմունալ-կենցաղային	8	0.1
շինարարական	3	0.04
արդձեռ (տրանսկապ)		
գյուղատնտեսական	5	0.07
բնութ. պահպանութ.		
առևտրի		
կենսաթոշակային	136	2.1
առողջապահության	23	0.3
կրթական և մանկ. հիմն.		
գիտութ. կուլտուրա		
ֆինանսական	361	5.1
օրենսդրական	26	0.3
քաղ. և որդեգրման հաշվառման		
աշխ. և աշխատավարձի	249	3.5
ապարատային		
այլ հարցեր	6095	87.7
սեփականաշնորհում	3	0.04

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

2015Թ. ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱՆՑ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ, ԲՈՂՈՔՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ստացված 6949 նամակներից մոտ 0.3%-ը եղել են առաջարկություններ, 5.1% հիմնականում վերաբերել են ֆինանսական հարցերին: Բողոքները կազմել են շուրջ 21.1%, որոնցով հիմնականում վիճարկվել են դատական ակտեր: Միաժամանակ, դրանց մի մասը բովանդակել է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդություն:

Նշված նամակներից մոտ 78.7%-ը տարաբնույթ հարցերով դիմումներ են, որոնց գերակշռող մասը՝ մոտ առնչվում է ֆինանսական հարցերին, մոտ 3.5%-ն աշխատանքի և աշխատավարձի հարցերին: Ընդ որում՝ ֆինանսական հարցերին վերաբերող դիմումները ստորաբաժանվում են՝

- դիմումատուների կողմից դատարան ներկայացրած գումարների պահանջների վերաբերյալ դիմումներ (որոնք հիմնական մասն են կազմում).
- դատարան դիմելիս պետական տուրքի վճարումից ազատելու վերաբերյալ դիմումներ:

Դիմումատուները դատական ակտի հետ չհամաձայնվելով, իրենց դիմումները հղել են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը՝ խնդրելով աջակցել իրենց դատարանում ներկայացրած պահանջների վերաբերյալ արդար դատական ակտ կայացնելու կամ պետական տուրքից ազատելու հարցերով: Դիմումներին պատասխանվել է, որ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը նման հարցերին միջամտելու, ինչպես նաև վարչական կարգով պետական տուրքից ազատելու իրավասությամբ օժտված չէ, որ նման վեճերի քննարկման իրավասությունն օրենքով վերապահված է դատարաններին: Դիմումների որոշ մասը՝ 0.5%-ը առնչվում է բնակարանային, 0.1%-ը կոմունալ-կենցաղային, 0.04%-ը շինարարական, հողային վեճերի վերաբերյալ հարցերին:

Իսկ մնացած՝ մոտ 87.7% դիմումները վերաբերում են տարբեր ոլորտներին առնչվող խնդիրներին, որոնց կապակցությամբ ուղարկվել են օրենքով սահմանված սպառիչ պատասխաններ ու տրվել պարզաբանումներ:

Հայտնվում է, որ ստացված դիմումներից 6874-ին տրվել է գրավոր: Ամփոփումների արդյունքներով տեղեկանքը կազմելու պահին 75-ի քննարկումը դեռ ընթացքի մեջ է: